

Հավելված
 ՀՀ կառավարության 2014 թվականի
 սեպտեմբերի 25-ի N 1052 -Ն որոշման

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ
 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Հանձնարարականի կատար- վելիք աշխատանքների և միջոցառումների համառոտ նկարագիրը	Կատարման պատասխանատուն	Համակա- տարողը	Ժամկետը	2015 թ. ֆինանսավորման աղբյուրը և պահանջվող գումարը
1. Կառավարման համակարգի կատարելագործում						
1.1.	«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կառավարման համակարգի կատարելագործում	Սևանա լճի և նրա ջրհա- վաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության մոնիթորինգի իրա- կանացում, միջոցառում- ների մշակում	ՀՀ բնապահպա- նության նախարա- րություն	ՀՀ գիտու- թյունների ազգային ակադեմիա (համա- ձայնությամբ)	2015 թ. և շարու- նակական	«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնի- թորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատար- վող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճա- կի մոնիթորինգի ծառայու- թյուններ» ծրագրի շրջա- նակներում Անտառնաքրման ենթակա տարածքների հարակից

						համայնքները
		Սևանա լճում և նրա ջրհավաքավազանում հիդրոկենսաբանական և հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի իրականացում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)		«Հայպետհիդրոմետ» ՊՈԱԿ-ի կողմից 2015 թ. ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրին համապատասխան
		Սևանա լճի ավազանի ինժեներատեխնիկական և սեյսմաշրջանացման դիտարկումների իրականացում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	2015 թ. և շարունակական	Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն
<u>2. Սևանա լճի ջրհավաք ավազանի բնապահպանական և բնօգտագործման գործառույթների կատարելագործման միջոցառումներ</u>						

2.1.	Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում անտառ-մաքրման աշխատանքների իրականացում	լճի շրջակայքի շուրջ 93 հա անտառաշերտերի մաքրում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	2015 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ 125400,0 հազ. դրամ «Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում
2.2.	Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի տարածքում մարզերի և համայնքների՝ ըստ ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակում	արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի, կապի, տուրիզմի, քաղաքաշինության և բնապահպանության ոլորտների զարգացման միջոցառումների մշակում	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ մարզպետներ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	2015 թ. և շարունակական	ՀՀ օրենքով չարգելված միջոցների հաշվին
2.3.	Ձկան պաշարների համալրում	արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ Գեղարքունիքի մարզպետ ՀՀ գիտությունների	2015 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ 60000,0 հազ. դրամ «Ձկան պաշարների համալրման ծառայություններ» ծրագրի շրջանակներում

				ազգային ակադեմիա (համաձայ- նությամբ)		
2.4.	«Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ	պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն, վերարտադրություն, գիտական ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի իրականացում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)	2015 թ. և շարունակական	ՀՀ պետական բյուջե՝ «Սևան» ազգային պարկի պահպանություն, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագիր՝ 267861,7 հազ. դրամ
2.5.	Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա	տարածքների վերականգնման աշխատանքների նախագծերի մշակում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ Գեոարքոնիքի մարզպետարան	2015 թ. և շարունակական	Ըստ անհրաժեշտության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխից, գումարը՝ ըստ գույքագրման արդյունքների
2.6.	Սևանա լճի ջրհավաք ավազանում կենդանական ռեսուրսների վերականգնում և ջրային ռեժիմի պահպանում	ձկների ձվադրման վայր հանդիսացող գետերում էներգետիկ նպատակներով կառուցված գլխային ջրառ կառուցվածքներում ձկնանցա-	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների		2015 թ.	ՓՀԷԿ շահագործող ընկերություն

		րանների վերականգնում և ջրային ռեժիմի պահպանում	նախարարություն			
2.7.	Աբու-Դարիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի շրջանակներում Արփա-Սևան թունելի վթարային հատվածների վերականգնման աշխատանքների ավարտում	Արփա-Սևան ջրատարի կայուն օգտագործումն ապահովող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագրի իրականացում	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե		2015 թ. և շարունակական	ՀՀ կառավարության համաֆինանսավորում, Աբու-Դարիի զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր՝ 1356952, 400 հազ. դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ